



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



3159

3160

3161

3162

3163

3164

28

1318

U-84





201





Handwritten text: *Handwritten*  
870



50

Printed in Turkey

BARON




# ՅՈՒՇԱՏԵՏՐ



ԳՐԵՑ

ՍԻՄՈՆ ԳԱՐԱՄԱՃԵԱՆ



ՀՐԱՏԱՐԱԿԵԱՆ

Ի ՆՊԱՍՑ

ԱՂԲԱՏԱԽԼԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ի ԻՍԿԻԻՏԱՐՈՒ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԱՑ ԱՇՃԵԱՆ  
ԵՒՍՈՒՅԵԱՆ ԻԱՆ ՄԻՋԻՆ ՅԱՐԿ ԹԻԻ 15

1885



91390-WZ

2422-57-5



ԳՈՐԾԱԴԻՐ ԺՈՂՈՎ

Տէր

Գործադիր ժողովս շնորհակալութեամբ կը նդու-  
նի Ձեր գրական նուէրն՝ ՅՈՒՇԱՏԵՏՐՈՒՄ՝ յօրմէ (1000)  
օրինակ տպագրելի՝ կարտօրնէք մեզ յօգուտ Աղբատա-  
խնամ ընկերութեան :

Քաղցր է մեզ յուսալ քէ սոյն տետրին տպագրե-  
լալ օրինակները սպասելով ամբողջովին կը հասնիք  
ընդ հուսլ Ձեր նպատակին՝ որ է այսու օգտակար  
ըլլալ ընկերութեանս :

Յարգանօք առ Ձեզ  
Ի դիմաց Գործ. ժողովոյ  
Աղբատախնամ ընկերութեան  
Ատենադպիր Ատենապետ  
Պ. ՏԻՆԱՅԵԱՆ Յ. ՔԵՐԵՍԵՅԵԱՆ

31 Մարտ 85

Իսկիւտար

(Կէէ)

Առ

. . . Սիմոն . . . Գաբամանեան



## ԵՐԿՈՒ ԽՅՍՔ

### ԱՂՔԱՏԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Մեծ ուրախութիւն կ'զգամ խօսիլ այն բարեխորհական ընկերութեանց վրայ, որք նպատակ ունին օգտակար ծառայութիւններ մատուցանել հանուրց: Աստանոր հարկ չեմ տեսներ բացատրել ընկերութեանց ոգին կամ կոչումը, որովհետեւ շատ անգամներ այս նիւթն ուսումնասիրուած է կարող գրիչներէ, և կրկին սոյն նիւթոյն վերադառնալն անտեղի նկատուի քուցէ շատերու համար:

Աղքատախնամ ընկերութիւնն եւս, հաստատեալ յամին 1880, օգտակար ծառայութիւններ ընելու կոչուած է, մխիթարելով աղքատ հիւանդներն, նոցա դեղ՝ ուտեստ և բժշկական դարմաններ հայթայթելով:

Իւսկիւտարու մէջ կազմեալ այս միութիւն պատիւ մ'է Իւսկիւտարու Հայ ժողովրդեան, որ իւր ամէն ազգաչէն ձեռնարկները կարող է ի գլուխ հանել յաջողութեամբ:

Աղքատախնամ Ընկերութեան նպատակն գլխութիւնն է, զթութիւն սիրել ընտանեկան յարկերու տակ՝ ուր թշուառութիւնը կերթայ յաճախ բազմիւ, ուր կարօտեալ մօր արցունքը կը հոսէ հիւանդ որդւոյն վերմակին վրայ, և այն թշուառ որդին կը քամէ արտասուած թոր բարձին: Երբ ամէն մարդկային կորովի ոգիներ կը վհատին այդ պարագային, այն ատեն ահա Աղքատախնամի գործադիր մարմնոյն կը հասնին թուղ-

Թեր, որոց վրայ արցունքի հետքեր կը նշմարուին , և այն նիւթական գորութեամբ՝ որով հայ ժողովուրդը կը պատուէ Աղքատախնամ Ընկերութիւնը , այն գորութեամբ կօզնէ Ընկերութիւնն թշուառաց , և կսփոփէ զանոնք :

Չկարծուի թէ այս տողերովն իւսկիւտարու պատուարժան Թաղական Խորհրդոց լուկեայն կընդդիմախօսեմ , որովհետեւ Ա.գգ. Սահմանադրութիւնը պարտք դրած է Թաղական Խորհրդոց վրայ թալին կարօտեալ ընտանեաց ձեռնտուութիւն ընել . (Տես յԱ.գգ. Սահմանադրութեան 52 , 53 յօդուածներն) :

Սակայն մինչ Աղքատախնամ Ընկերութիւնը օգնութիւններ կընէ աղքատաց , Պատ. Թաղական Խորհուրդք ձեռնթափ չեն : Ինիր նորա գործակցելէ , և իրենց յօժարափոյթ և պատուաբեր քաջակերութիւնը կընծայեն Ընկերութեան , զիւրութիւններ տալով սոյն բարենպատակ գործը ի գլուխ հանելու համար :

Հարկ չմնար բացատրել թէ արդէն նոյն Պատ. Խորհուրդք ինքնին կը նպաստեն իրենց թաղերու աղքատաց եւս :

Մեր ընկերութիւնք՝ չեն անսաստեր երբէք Ա.գգ. իշխանութեանց , մանաւանդ անոնց օժանդակութեամբ աւելի կը բարգաւաճին , ինչպէս Միացեալ ընկերութիւնք երջանկայիշատակ Ներսէս Պատրիարքի օրով աւելի կը նպաստաւորուէին և թէ իրենց հասոյթները օր ըստ օրէ Թրքահայոց և Ռուսահայոց օգնութիւններով կը բազմանային : Այսպէս նաեւ Աղքատախնամ Ընկերութիւնը ձանչցուած և լաւ զնահատուած տեղային Թաղական Խորհուրդներէն , եւ վաւերացեալ Տնտեսական Խորհուրդէն 1884 թուականին , օր ըստ օրէ պիտի բազմապատկէ իւր հասոյթները :



Աղքատախնամ Ընկերութիւնը համեատ նմանողութիւնն է Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցի՝ որ ի հիմանց կառույց 1830 ին Ազգային անդուգական բարերար Պէդճեան Յարութիւն Սմիրայ : Սոյն հաստատութիւնը բարերարաց տրոճք կը շարունակուի եւ արտայայտութիւն մ'է հայոց գորովալիր զղացմանց : Սոյն այս հաստատութիւն կը յորդորէ միշտ գմեղ հետեւիլ իւր օրինակին եւ բանալ ամենուրեք՝ ուր որ հայ կայ, գթութեան տուներ, եւ ծաւալել մարդասիրութեան գործը հայ ժողովրդեան ամէն խաւերուն մէջ :

Այս հաստատութեան օրինակէն ներչնչուած հաստատուած է նոյնպէս ի Խասպիւղ Աղքատասիրաց ընկերութիւնը՝ որ՝ ինչպէս կը տեղեկանամ, գովելի եւ անդեամբ կաշխատի ի մխիթարութիւն աղքատաց :

Այն ժողովուրդք՝ որք կը ճանչնան իրենց պարտաւորութիւնը՝ միշտ արժանի կը լինին բազմաց երախտագիտութեան եւ շնորհակալեաց . այս տեսութեամբ միշտ կը պարտինք երախտագիտութիւն եւ շնորհակալիք այն ամէն անձանց՝ որք աշխատած են ինչպէս բոլոր Ազգօգուտ ընկերութեանց՝ նոյնպէս Աղքատախնամ Ընկերութեան համար :

Ես չպիտի ջանամ այս տողերուն մէջ հայ ժողովուրդն յորդորել ի գործակցութիւն սոյն մարդասիրական ընկերութեան, զի գթութիւն բառն արդէն ինքնին կազդէ ամէն սրտերու՝ օգնելու հարկը, այլ կը ցանկամ որ նպատաք աւելի առատութեամբ շնորհուին այսօրինակ միութեան մը :

Այսմ կրնամ յուսալ լիուրի վստահութեամբ արգարեւ, քանի որ ընկերութիւնը իւր կազմութեան թուականէն մինչեւ ցարգ հետզհետէ նոր նպաստներով քարգաւաճած է, այսինքն 1880 էն մինչեւ 1884, Ըն-

կերութեան Ա. շրջանին մէջ , 4000 զշ. ի չափ հանգանակուելով ատկէ 949 զշ. պատրաստ դրամ ունեցած է ի վերջ Ա. շրջանի Ընկերութեան. իսկ Բ. տարին , երբ գործառնութեանց շրջանը տակաւ ընդարձակեցաւ , այն ատեն կարողացաւ 7314 զշ. 30 փրյ. ծախք ընել 9512 զշ. 10 փրյ. էն, այսինքն Բ. շրջանի հասոյթէն , որով 2197 զշ. 20 փրյ. պատրաստ ունեցաւ Ընկերութեանս արկղն , իսկ Գ. տարւոյն մէջ նախորդ տարիէն աւելի ծախք ընելով 3105 զշ. դրամ պատրաստ ունեցած է :

Հուսկ ուրեմն Գ. տարին , որպէս հրատարակուեցաւ 1884 նոյ. 25 ին մասնաւոր թղթով , 174 հիւանդք դարմանուելով հանդերձ 8762 զշ. 20 փրյ. պատրաստ դրամ ունեցաւ . իսկ Ընկերութեան ներկայ տարւոյն՝ մինչեւ կէս շրջանն , 200 ի մօտ հիւանդք դարմանուած են , Ընկերութեան պատրաստ դրամն նոյն պահելով :

Ժողովուրդն իրաւամբ կրնայ պարծիլ վերոգրեալ թուսնշաններն տեսնելով որք ինքնին պերճախօսութեամբ կը յայտնեն Ընկերութեան կացութիւնը , և կրնայ ուրախանալ ի տես սոյն բերկրառիթ վիճակին , զի իւր արդեամբք ստացած է Ընկերութիւնն ըստ կարի իւր նպատակը գործադրելու զօրութիւնը :

Այս հետզհետէ ի լաւ անդր աստիճանաւորութեամբ կը հաւատամ թէ մօտաւոր ապագայի մը մէջ Ընկերութիւնս պիտի կարողանայ իւսկիւտարու բարձանց վրայ կառուցանել 60-70 հիւանդներ պարունակող հաստատութիւն մը , Անկէլանոց Խաչիկ-Կոթայի Աշտարակեան Ընկերութեան անուամբ :

Ահա այս բարեգործութիւն՝ որ այժմ խորհուրդ մ'է , ի մօտոյ իրականութիւն գտնէ թերեւս , և մեր ազնկալութիւններ պատկուին լիովին , զորս կը տածեմք

միշտ առ Աղքատախնամ Ընկերութիւն :

Մարդասիրութեան ողին ծաւալել ամեն ուրեք . ահա փրկաւէտ սկզբունք մը , և Աղքատախնամ Ընկերութեան 'աջակցող ամէն հոյ անհատք իրաւունք պիտի ունենան եռանդագին շնորհակալեաց , զի նոքա կիջեցնեն երկնային բնագաւառներէն զթութիւնը , ոգին այն հիանալի , որ կը լռեցնէ հառաչանքը , և ծագիկներ կը սփռէ թշուառութեան ճանապարհին վրայ :

Երբ հիւանդը կը տքայ ցաւոց անկողնոյն մէջ , անդին ծերունի մայրը կը ջանայ իւր յուզմունքը զսպել և յուսահատութիւն չպատճառել , երբ հիւանդին համար կը պակսի արգանակն , և տխուր հեծեծմանց մէջ ձայն մը երկինք կը բարձրանայ այսպէս « Աստուած իմ , մինչեւ երբ այս հիւանդութիւնը յլրէ՞ժիւնդիր ոգւով պիտի հալածէ զիս » :

« Մի յուսահատիր զաւակս , կը գոչէ մայրն տառապեալ , Աստուած կը խրկէ այժմ իսկ իւր շնորհներն և կօփոփէ զմեզ . քիչ մը առաջ մեր քահանայն խոտտացաւ օգնութիւն մը յղել , անշուշտ գիտես , զաւակս թէ Քահանայք Աստուծոյ պաշտօնեայներն լինելով յԱստուծոյ կը յղեն բարութիւն » :

Սփոփուեցաւ հիւանդը , վասն զի քիչ ժամանակէն ազնիւ բժշկի մը եկաւ ընկերակցութեամբ հայրագործով անձի մը հետ . հիւանդին վրայ կանխաւ տեղեկութիւններ առաւ , յետոյ կործքը , բազկերակը զննեց , և զուարթութեամբ մօրը դառնալով՝ որ անբացատրելի անձկութեամբ բժշկին կը նայէր , և կը ջանաբ անոր զիմաց վրայ յոյս կարգաւ , բսաւ . « Աւրախ եմ որ շատ թեթեւ է հիւանդութիւնը , քիչ մը զգուշութիւններ պէտք են , և ճշդիւ գործադրել գեղագրերս » :

Յետոյ նոյն բարի բժիշկը դառնալով իւր ընկերացոյ անձին ըսաւ մեղմածայն . « Երկար առնէ ի վեր լաւ անուեզ չառնելով ջրերն տկարացած են » :

Բնակարանին անպատասպար վիճակը , հէք մօրն անձկութիւնը , և բժշկին յայտնած ճշմարտութիւնը սարսուռ կը պատճառեն զգոյուն անձանց , և սակայն թշուառութեան տկանատես լինելու համար , պէտք է պտոյտ մը ընել այն օթեւաններուն մէջ՝ որք արցունքով թրջուած են : Մննար է առանց յուզմանց չղիտել թէ քանի անկումներ տեղի կուենան տանց մէջ :

Աղքատախնամ Ընկերութեան մեծ անձնուիրութեամբ աշխատողաց անուանքը զսնց կընեմ հոս յիշատակել , վասն զի նոցա համեստութիւնը կարգիլէ զիս հուշակել ի լուր աշխարհի նոցա անունները :

Լիայոյս եմ որ ի մօտոյ Աղքատախնամ Ընկերութիւնն աւելի ընդարձակուելով թշուառութեան խեղճուկ հառաչանքները կը դադրեցնէ Խօսկիւտարու Հայ տուններէն և կը քաջալերուի այն նպատաներով՝ զորս ժողովուրդն կը նուիրէ յանուն մարդասիրութեան :

Վերջ կուտամ բանից՝ կրկնելով շնորհակալացս պարտքն աւ ամենեայն՝ որք կաշխատին յօգուտ Աղքատախնամ Ընկերութեան՝ որոց առաջինն է թերևս Իսկիւտարու Վսեմ. կառավարիչն Ալի Րիզա բաշա , որ լաւ գնահատած է այսօրինակ ընկերութեան մը պէտքը՝

Անշուշտ պատուարժան ազգայինք քաջալերելով զայս Ընկերութիւն պիտի արժանանան այն երանութեան՝ զոր Աւետարանը կընծայէ զթոտ անձերու . « Երանի որ խորհի զաղքատն » :



# ՅՈՒՇԱՏԵՏՐ

Ն.

Քաղցր է ինձ միշտ ժողովրդեան հետ տեսակցել, զի ժողովրդեան յետին զաւակն եմ. յոյժ գոհունակութիւն կզգամ ատօի, և կը մխիթարուիմ այն վշտերէն՝ որք տխրութեան սեւքող մը կը պատեն մերթ ոսկի երազներուս վըրայ, և բերկրալիւր սրտէս արիւն կը հոսեցնեն: Բնաւ արտունջ հանած չեմ՝ այն դժուարութեանց առջեւ՝ որք ազքատիկ հոգիներու անբաժան ընկերներն են. մինչ գրիչը սառած մատներէս կը սահէր երբեմն, գոհ էի սրտովին, զի վառ ջնջովս կը տարցնէի զայն. երբ ուսուցչական այժմու կենացս մէջ, չըջապատուած բարեկամներէ, որք զիս կը յորդորէին ազգային պաշտօններէ հրաժարել, այն պահուն զուարթ էի, զի կը սիրէի և կը սիրեմ՝ այն ուշիմ՝ ուսանողութիւնն զոր վեց տարիներէ ի վեր (1879-1883) ի.ս. Նոր-Թաղի Թաղ. Խորհրդոս և Հոգարարձութեան Պատ. մար ինք ինձ յանձնած են, վատահելով անշուշտ ոչ այնքան հրմտութեանս, այլ առատել խանդիս:

Որչափ կրցած եմ ուսումնասիրել Նոր-Թաղն, տեսած եմ թէ շատ գրկանքներ կրած է թշուառութեան ձեռամբ, շատ հալածանքներու մատնուած. 1870 ի պատահած հրդեհը

ամենարուսն հարուածն էր չարեաց, մահացու հարուած մը՝ որոյ վրայ (ինչպէս և ամէն պարագայի մէջ) կայս. կառավարութեան դուժն եւս շարժեցաւ. դժբախտ հրկիզելոց վիշտը ամփելու համար դրամական նպաստ, պարէն հայթայթեց. այդ՝ միութարութիւն մ'էր և անհնար էր չարիքն ի միջոյ բառնալ: Ծածկուած էին ընտանեկան յարկեր և թշուառութեան անդունդը բացուած էր, միտին և անյատասկ . . . :

Սակա՛ն այդ հրդեհ որչափ աղետաբեր, նոյնքան բարերար է այն հուն՝ որ կը վառի Նոր-թաղի բնակչաց ստուար մասին սրտերուն մէջ, հուն՝ առաքինութեան, զոր արծարծելու համար մասն ունին եկեղեցեաց բարւոք վարչութիւնք և դպրոցաց բարւոք վարչութիւնք: Բանիրուն քարոզիչք ա՛նուրեք շունչ կուտան ժողովրդեան, ինչպէս Գեր. Տ. Մատթէոս Եպիս. իզ իրլեան՝ որ հայ եկեղեցականութեան շքադիր անգամներէն ին է, և իւր նուիրական պաշտաման մասին ունեցած լի ու լի գիտակցութեամբ Նոր-թաղի աւերակաց վրայ ծաղիկներ աիւած է, և իրաւամբ յոյսեր սնուցած է բազմաց սրտին մէջ թէ ինք բարեկամ է Ազգին: Հա ժողովրդեան զգացմանց ճշմարիտ թարգման կրօնական և Երեսփոխանական ժողովներ դնահատած են սո՛ն բարձրատիճան եկեղեցական ին արժանիքն կաթողիկոսական և Պատրիարքական ընտրութեանց մէջ ստուարագոյն քուէներով պատուելով զԳեր. Տ. Մատթէոս Եպիս. իզ իրլեան:

Քարոզիչներ մեծ դեր կը կատարեն, ասի ճրջ-  
մարտութիւն մ է, ինչպէս և խուսի. Սէլամիէ  
Թաղն խոնարհամտութեան առաջնորդուեցաւ  
Արհիապ. Արիստակէս Արքեպիսկոպոսի օրով,  
խռովութեանց՝ Արժանապատիւ Մեսրոպ Վրդպ.  
ձերմակեանի օրով, և աշխուժի՝ այժմու ար-  
ժանընտիր Քարոզչին, Գրիգորիս Ս. Արքեպիս.  
Ալէաթճեանի շնորհիւ :

Նոր-թաղն չեմ կրնար յիշել առանց հա-  
ռաչ մը արձակելու գէթ, վեհ հանճարի մը  
յիշատակին նուիրուած հառաչն է այն, հրաբու-  
խի զաւակին՝ որ մարեցաւ ծխամած հիւղի մը  
ցուրտ ծոցին մէջ. այդ վեհ հանճարն ՊԵՏՐՈՍ  
ԴՈՒՐԵԱՆՆ է, որ թշուառութեան շնչով խամ-  
րեցաւ շուտով. ինք իսկ ճարտար կը նկարէ ազ-  
քատութեան դառնութիւնները իւր քերթուա-  
ծոց մէջ : Այսպէս կը խօսի ուրեք :

«Տնանկին դամբանը կանհետի տոնակոխ,  
Տնակին մէջ մարի առկայծ կանթեղն հող,  
Այն մութին մէջ նօթի տղղեկք կը հեծեն .  
Դղեակն խրախ մինչեւ լոյս ջահք կը հիւծեն,  
Հարուստին կառք ժխորով կանցնի սրարչաւ .  
Հէքին դադաղն իր գերեզմանն լուռ իջաւ » :

Պետրոս Դուրեանի թէ ձեռագիր և թէ  
տպեալ գործերը ընթերցողն պիտի կարծէ թէ  
բանաստեղծական բազմահատոր գրքերէ եղած  
ժողկաքաղներ են գեղեցկահիւս :

Այն քերթուածոց մէջ հանճարոյ հուրն կայ-

ծեր կը ցոլայնէ, կայծեր՝ զորս մինչև ի գերեզման կը տանի իւր հետ վաղա՛մեռ իկ քերթողն:

Իսկիւտար կը սլարծի իւր այս զաւակաւ՝ յափշտակուած ընդ երկար նորա քնարին ներգաշնակութիւններէն, կը հեկեկայ վշտօք, այլ և կափովուի երբ կը մտածէ թէ ազգային գրագէտք կամ դաստիարակք յոյս ներշնչած են իրեն, ինչպէս Յ. Տէրոյենց պատուելի, Խ. Մեսարեան, Մ. Մեղպուրեան Ռ. Պէրպէրեան, Պ. Պառնասեան Խ. Ուղուրիկեան, Ե. Փափազեան, Ն. Ճիւլանեան և այլք բազումք որք իսկիւտարու մէջ գրագիտական կաճառ մը կը գումարեն կարծես, և բաժնուած լինին թէեւ զանազան հերձուածներու՝ սակայն կը դաւանին հանճարի մը առաւելութիւնները:



Միշտ հաճոյք զգացած եմ՝ իսկիւտարու մէջ տեսնուած առաքինութիւններուն վրայ զմայլելի որքան ալ տխուր երեւոյթներ մերթ ընդ երթ գան պզտորել զմայլումն, ինչպէս այն ահիպարանոց թշուառութիւնը՝ որ մղութիւնը քաջալերել կը նկրտի, և կուզէ իսկիւտարու հայութեան նահապետական պատկառելի քօյր հերձոտել. այս տխուր երեւոյթն անմիջապէս կը փարատի, երբ յուսալից՝ աչքերս կարճակեմ՝ այն ազգային վարժարանաց, թէ թաղայիններու և թէ մասնաւորաց վրայ և անկէ դուրս ել-



ներու սերնդոց ակնդէտ կտայտեմ :

Զիլիֆտարի պարտէզն ալ այս երկու թա-  
ղերուն էջ շղթայ մ'է միութեան, հոն է երա-  
նութեանս բոյնը, հայրենի տնակը, այնքան ցա-  
ծուն և խարխուլ, այլ բարձր յոյժ և հաստա-  
հիմն իւր ներշնչած տպաւորութեամբք . հոն սոր-  
վեցայ գլխաւորաբար ընտանեկան սիրոյ աբու-  
բէնը, հոն հետզհետէ բոցավառեցայ այն սիրով  
որ սուղ ինչ յետոյ կենացս առաջին յոյզն եղաւ,  
այսինքն մղեց զիս ընտանեկան հրապոյրները հը-  
րապարակել, կամ հայ տուններէն նախապաշա-  
րու մները մերժելով՝ առաքինութեանց գըր-  
ուագներ յօրինել հանգիստապէս : Հոն սովորե-  
ցայ սիրել բարին և գեղեցիկը, ծնողքս, եղբար-  
քս և քոյրերս . ասոնք են ինձ համար Զիլիֆ-  
տարի շուքն, իմ բերկրանքս . իսկ քոյրերս գո-  
հարներս են, որպէս գրած էի Էմէ-Մարգէնի  
թարգմանութեան սկիզբն, որոնցմէ մին, ա-  
ւաղ, Զիլիֆտարի պարտիզին ծաղի կն խնկահոտ  
յաւխտե՛նականութեան պարտէզները հոտաւորե-  
լու համար թառամեցաւ մարմնովն յերկրի (\*) :

---

(\*) Ուշադիր ընթերցողք պիտի տեսնեն թէ ջանա-  
գիր եղած եմ ըստ կարի եղբայրական գղացումներս  
բռնաղբօսել սակայն եթէ սոյն տետրիս մէջ ուրեք ուրեք  
գրուածսք սպրդած են առ վաղամահ քոյրն իմ, ըն-  
թերցողաց ներողամտութիւնն կը խնդրեմ, թէև սոյն  
տետրիս նպատակն է քանի մը դոյզն խորհրդածու-  
թիւններ ներկայել, և Յաշարեփն յօրինել յաւխտեա-  
կան փառաց, որոյ կարժանանան և պիտի արժանա-  
նան իմ և ընթերցողացս զբաւամահ սիրելիք :

Երբ հեռաւոր աներեւոյթ աշխարհներու բերկրանաց ունին դնեմ, երբ ներելի ըլլայ հոգւոյս յաւիտենականութեան եզրերէն անդին թռչիլ՝ «իրոյ համոյր մը տալու անոր՝ որ իւր այժմու երանութեան մէջ իւր դասակից հրեշտակերամ խմբին հետ կը ծափահարէ Ամմահին փառաց, կամ կսկծանաց արտօսը հեղուլ այն տրխրառութիւթ բաժանման համար՝ որով հրեշտակի թեւեր առաւ իւր սիրելիներէն տարագրուելու քաղցրիկ ողին այն, երբ ինձ համար քաղցր անունն արտաբերեմ, այդ անունն սրտիս մէջ արձագանգ մը ունի, ամբժութիւնն:

Երբ մայիսի ծաղիկներն տեսնեմ՝ որք դաշտերը կը լուսազարդեն. այն ժամանակ կը յիշեմ թէ անշուշտ բնութիւնը մահու դաշտն ալ զարդարած է, հոն ուր բազում սիրելեաց հետ կը հանդչի նաեւ ոսկրոտին հոգեհատօր իմ սիրելւոյն, այն ժամանակ կը բերկրեմ:

Ինձ համար անճատ գեղեցկութիւններն միշտ սիրելի լինելով՝ մտօքս պիտի վերասլանամ միշտ այն երկնագաւառներն յորս ոչ մրբիկն կը գողայ՝ դղրդելու համար աղքատին խրճիթը՝ զոր թըլուառութիւնը իրեն օթեւան կրնտրէ, ժլատ հարուստին դղեակը՝ իմացնելու համար անոր թէ, «պէտք է օգնել աղքատին», այն անմահ դարաստաններուն մէջ՝ ուր խորշակն չչնչեր, գերեզմանաց զարդ եղող բաղեղն չփարիը հոն սեւազէս նոճիներու, այլ բոսորագոյն վարդեր՝ պսակներ կը յօրինեն հրեշտակագեղ կոյսերու:

Երբ այս տողերը կը գրեմ, կը յիշեմ սա  
խօսքերն՝ զորս արտասանեցի բազմարդիւն անգ-  
ղիաբան Ա. Տէր Սահակեանի հոգակուտին վրայ,  
տարւոյս առաջին օրն :

« Այժմ՝ յաղթեցիր, ո՛վ մահ, սակայն ոչ,  
մինչ յիշատակը՝ ժիրաժիր՝ աշխարհներ պատուե-  
լով հայ սրտերու մէջ նուիրական արձաններ կը  
կանգնէ, դառն հեղնութիւն մը կարճակէ առ  
քեզ. դնա՛ այլուր ոչնչութեան անդունդը գա-  
հավիժել չարն ու վատթարն, մոլին ու ապի-  
կար, և յայնժամ պատիր ուրախութեամբ փայ-  
լեցուր նսեմ՝ ճակատդ և դեռ վրէժ մունչէ : »

Ճշմարիտ սիրողն վրէժ չտածեր, այլ նե-  
րում, մենք ևս կը ներեմք նորա անողորմ հար-  
ուածներուն, մեր սիրալաու սրտերն արժուոյ  
նման միշտ բարձրերն կը հասնին, մինչև այն  
բարձունքն հաստատուած են Յակովբայ սան-  
դուղն, այն սանդուղին ստորոտն մենք մեր գը-  
լուխները կը ջախջախենք արտասուալից առ-  
մարդկային տկարութեան, ի դուր փնտուելով  
մեր շուրջն մեր հոգեհատորներն, սրոյ անուն-  
ները կենաց դպրութենէն ջնջուած են երկաթի  
քերիչներով. կը տրտմինք, երբ աշխարհի վրայ  
կը տեսնեմք թշուառը՝ սրոյ արցունքները կը  
սառին այտից վրայ. կը հրճուինք, կը տեսնեմք  
զանի՛ սրոյ արցունքները կը ջնջուին հրեշտակաց  
համբոյրներով երկնից մէջ, նա լոյսերու մէջ կը  
լողայ. կեանք կառնու, և երանութեանց ազ-  
բեր քով կանցնէ հոգւոյն ծարաւը և կընդուն-

Հ. Ս. Ս. 2248

ուի այն հարսանեաց մէջ՝ որոյ անանց են ուրախութիւնք, անշիջանելի՝ ճրագունք :

Արդարոյն հողին ևս այն հարսանեկան մըշտավառ ճրագներէն մին կը լինի լուտաճաճանչ, անմեղ կոյս մը՝ որ բոլոր երանութեան արժանի է :



Կայ աշխարհի վրայ գեղեցկագոյն բան մը հրապուրիչ և սիրայորդոր քան զհասակ կուսութեան. երբ Աստուած նոր շնորհներ տնօրէն կուսադեղ արարածին վրայ, կը ներկայացնէ աշխարհի իրբեր յաղթասպանած ամազոն մը և սէր կը ներշնչէ վարդ մ'է այն՝ որոյ թերթերը խել կուղեն անգութ մարդիկ . ամենէն չքնաղագոյն բանի կը յարի . տգէտ խակ կըլլայ՝ բնութեան ամենաճոխ գրքին մէջ կարդացած է վսեմ փիլիսոփայութիւն մը, և երկնից կամարներուն վրայ քանդակուած կը տեսնէ գեղեցիկն, ճշմարիտն ու բարին . այն ինչ մտած կենաց պարտեզը կը քաղէ ծաղիկներ, ինք ևս ծաղիկ գեղեցկագոյն . Եւրիդիկէ նուազ խանդ ներշնչած է Որիէոսի քնարին, Ասպասիա նուազ տիրապետութիւն ունեցած է Պերիկլէսի հանճարոյն, Կիրիկէ իւր գեղովն նուազ յափշտակած է զմարդիկ և զանոնք խոճկորներու փոխակերտած, քան որչափ կոյսն իտէական սիրով կողբւարի, այն սիրով որով Լամարդին անգլիմագրելի հրապոյրներ կը ճգէ իւր Ռաֆայել սիրավէպին մէջ : Յուլիայի և

Ռափայելի անբացատրելի սէրը՝ որ աշխարհի սահմաններուն մէջ չկրնար պարփակուիլ, որ մտային կարողութիւններէ վեր կուզէ ստեղծել եղեմ մը, սիրոյ աշխարհ մը, անընդհատ երգերով որսրուած : Ահա նոյն կոյսն է՝ որ աշխարհակալին ճակատուն վրայ շառագունանք կը ճրգէ, քաղաքաբաշտին ծրագրերը կը ջնջէ, բանաստեղծին կարողութեան վրայ տարակոյս կը թաղու : Հասկանալու համար թէ կուսական հասակը յանկուցիչ է և սիրաբորբոք, բաւ է ՚իւայմ Պ. Օ. Տոնովանի, թան լրագրոյ թղթակցին լուսանկարին վրայ ակնարկ մը ձգել, նոյն խակ Պ. Օ. Տոնովանի պառկած արեւելեան գեղութեան մը ստից անջուրբ սիրազոհ մը :

Պէտք չէ շփոթել ըզիրչ և ցոփ սէրը անբիծ և երկնանուէր սիրոյ հետ . կատեմ՝ այն սէրը՝ որ ղկամպէթթա Գերմանուհւոյն գրկաց մէջ կանչնչացնէ, թերեւս այդ կին Գերմանիոյ համար Յուզիթ մ'է, սակայն Գաղիա դեռ քանի քանի գիւցաղներ իւր ծոցոյն մէջ կը կրէ, և քանի վրէժխնդիր և բոցաշունչ ոգիներ կը ծընուցանէ :

Ատելի է այն սէրը՝ որով Հերովդիա վառուած՝ իւր տիւում հրապոյրներուն ի վարձք սուրբի մը գլուխը կը խնդրէ, և ուրախութեամբ մնլեգին՝ կը ժպտի : Գարշելի է կոտորինէ Ա. Հերիկոս Բ. ի կինն որ Ս. Բարթոլոմէոսի կոտորածին թեւագրին էղաւ, Մարիամ Մեռիչեան, որ Հենրիկոս Գ. ի թշուառութեան պատճառ էղաւ :



Եւ սակայն կուսութիւնը զըռւանք կզգայ այս յոռի օրինակներէն՝ զորս մարդկային ազգի պատմութիւնը կը ներկայացնէ . նա կը շլանայ մեծափարթամ տեսարաններէ , այլ չհրապուրուիր , իւր ապագայն իրեն համար երազ մ'է , և իւր արդի վիճակը նախանձելի կը գտնէ . հինգ տասը քայլ տարածութիւն ունեցող սենեակ մը բաւ է իրեն աղօթելու համար միայն խօսակցելու համար յաւիտենականին հետ , գրկախառնելու համար հրեշտակաց հետ մտօք<sup>5</sup> : խառնելու համար իւր արտասուքն չգիտեմ որպիսի էութեան հետ , այլ սակայն այդ արտասուաց մէջ աւելի գեղանի և աւելի ժպտուն կերեւի . կարծես ցողաթուրմ ծագիկ մ'է , որ իւր գըլուխը կը բարձրացնէ՝ ողջունուելով անթիւ թռչնոց երգերով . սիրովուած է անտիական կոյսնայն աղօթքով , զի իւր արտասուօք գնեց երկնային երանութիւնը : Որչափ արարածներ իրենց երջանկութիւնը տուայած են արտասուելով . . . :

Եւ եթէ յանկարծ ծածկեալ այս մանուշակին կուսական քօղը բանայ սք , ի՛նչ կարմրեալ կեղ ցածնութիւն և ի՛նչ հմայք կաւերնան անոր վրայ : Մայրենի տունը թափուր պիտի թողու . ի՛նչպէս կարելի է այս : Հոս է ահա զգացմանց պատերազմը . պիտի նուիրէ իրեն վտահուած գանձը՝ անոր , որ անծանօթ է իրեն մին-

չեւ ջայն վայր : Ընտանեկան յարկը նա կը թա-  
ղու , այլ նա սիրոյ յիշատակարան մը կը կանգ-  
նէ այլուր անասան , նա կերջանկանայ և սա-  
կայն պահ մը կը կարծէ իւր թէ կուսական վիճա-  
կին մէջ աւելի երջանկութիւն , աւելի սէր , ա-  
ւելի խանդ կը վայելէ :

Նախանձելի ապաքէն , երբ նորա օժիտն  
է կուսութեան հետ միացած այլ առաքինու-  
թիւններ , երբ հեշտութեան պլաքներ մխուած  
չեն նորա սրտին , երբ երկնային պարզեւ մը ա-  
նարժան սրտի մը չէ առանգուած . երբ հերար-  
ձակ խանդավառ ծունր կը կրկնէ , սիրաբուղիս  
ողւով ուխտեր կուզղէ յերկինս , ինչ ուխտեր  
են ատոնք . գաղտնիք , խորհուրդ . . :

Զկարծուի թէ երեւակայութեան թռիչնե-  
րով ի զուր կը հատանեմ մտացածին աշխարհ-  
ներ , ընդ վայր կը նկարեմ կուսութեան բազ-  
մահրապարտ պատկերն , կուսութեան մշտնջենա-  
ւորութիւնը կը խնդրեմ , այսինքն Սրբուհիներու  
լեզուներն պատրաստել :

Ոչ բնաւ կը ջանկամ զի այդ կոյսն գեղեց-  
կատես , իրրեւ վարդ թօշնի առանձնութեան  
մէջ , այլ արդէն ըստ ըզձից մերոց աշխարհ  
կարձանագրէ զանի բարի մարց ջանկին մէջ ,  
գեղեցկացած այն որդիներով՝ զորս առաքինի  
սէրը ի ըյս կածէ . նորա բազկաց վրայ սուր և  
ասպար լինելու տեղ կայ մանկիկ մի , իւր գո-  
րովանայ հրաշակերտը . այն ժամանակ իւր հո-  
գերը կաւելնան , պատասխանատու կը մնայ

Աստուծոյ և ամուսնոյն, խօսակից կը լինի շարունակ դիեցիկ մանկան հետ. կերգէ, որպէս զի որդին հանդարտի, կը ժպտի, որպէս զի մանկիկն զուարթանայ, կաշխատի, որպէս զի իւր հոգեակն զարգանայ, եթէ կուսական վիճակին մէջ յոյզեր ունէր, մայրութեան մէջ ևս երանութեան խառն ընդ տրտմութեան շփոթութիւններ ունի ի սրտին: Կը տիրապետեն նրմա ամէն անձկութիւններ. և սակայն, ինչ աննրկուն ոգի, նա կը գիմակալէ ամէն վշտերու. վշտանալու նախասահմանեալ արարած մ'է. վրշտով կը սնանի, և շրջապատուած իւր որդիներէն կերիտասարգանայ հակառակ տարիներու գրծած խորշոմներուն. կը կրթի թշուառութեան առջեւ այն արցունքներով, զորս թափեց առատօրէն մայր լինելու պահուն և ապա:

Թող կիներ մայր լինելու փափանքին, սակայն յիշեն Ռաքելի արցունքները, անխիթար մօր մը աչաց ցօղերն. լեռներ կը թնդան տառապեալ մօր մը երկանց ցաւերով, պիտի գայ օր մը՝ յորում նորա ողբերն պիտի թնդացնեն նոյնպէս լեռ ու ձոր. երջանիկ եղաւ օր մը, և թշուառ ուրիշ օր մը. ահա շղթային երկու ծայրերը՝ զորս ի ձեռին ունի մարդն աշխարհի վրայ:

Թերեւս կարծուիմք թէ յոռեանս եմք յամենայնի, յուսահատութեան անդունդներ յու-



զել և գահալիժել հոն աշխարհի ամէն մեծութիւններ :

Քրիստոնեայ մայրեր երբէք չեն վշտանար, կամ աւելի ճշմարիտն ըսելով, չեն յուսահատիր իրենց սրբուց կորստեան վրայ . նոքա կը հաւատան թէ երբ իրենց վաղապրաւ սրբիները կը չունն յատեաց, Աստուած բացած է ամէն ժամանակ զինուորագրութեան տեսար մի, յազթական զինուորներ ընդունելու համար . հայոց բարեպաշտիկ մայրեր այսպէս կը հաւատան թէ ոչ վրիժուց Աստուած մը կայ և ոչ այլ անիժապարտ զօրութիւն մը՝ որ իրենց կենաց բաժակին հետ լեզի՛ խառնէ, այս է որ զիրենք կը մխիթարէ, կողեւորէ, կարիայնէ : Ո՛վ քրիստոնէութիւն, քանի նախական է քու ներչնչումը, դու գրախառ ա՛մէն քրիստոնեայներու սրտից մէջ կը հաստատես, աւելի մեծ և խորհրդաւոր քան Հնդկաց Ներվանան, աւելի չքնազազեղ և կանաչազգեաց քան եգեմական վայրըն ուր նախածնողք վայելել կարծեցին իրենց երջանկութիւնը, և սակայն տեսան Աստուծոյ մը անհարկներուն տակ իրենց մերկութիւնը :



Հայոց մայրերն ևս այդ քրիստոնեայ կանանց դասն կարգուած են, նոքա ունին ընդարայս բարեպաշտութիւն, սակայն այդ բարեպաշտութեան . ոգին սխալ ըմբռնուած կը լինի

երբ նոքա չարախօսութեան, բամբասանաց հետեւող կը հանդիսանան: Թէև նպատակ չունիմ այս տողերուն մէջ նոցա թերութիւնները ի վեր հանել, որովհետև սոյն տետրս բարեսիրական ընկերութեան մը ի նպաստ հրատարակելու համար, չեմ ուզեր որ ընկերութիւն մը գործիք ընեմ իմ նպատակներու համար, մանաւանդ թէ չեն պակտիր ինձ ուրիշ միջոյններ ձաղկելու համար հայ տուներուն մէջ դարանամուտ եղած մոլութիւնները. սակայն յոյժ կը ցաւիմ որ դեռ կը գտնուին բազում ընտանիքներ որք անդիտանալով իրենց կոչումը չարաչար կը զրպարտեն գեղեցիկն ու բարին. նոքա երբ կը տեսնեն բարի մայր մը որ կը փարի իւր որդւոյն, կըսեն թէ խեղդամահ ընելու համար է՝ երբ կը նկատեն կին մը որ շատ կը սիրէ զիւր ամուսին, կըսեն թէ թունաւորելու համար է՝ երբ կը դիտեն ըզմայրն որ իւր հիւանդ որդւոյն ի տես կը ժպտի նորա կարեւիք սիրան փոփելու համար, կըսեն թէ անոր մահուան համար իւր ուրախութիւնը չկրնար ծածկել, և դեռ ինչ զրախօսութիւններ, զրպարտութիւններ կը ժայթքեն նոցա սըրտերէն. ապականութեան ժահահոտ թոյներ զորս կը փութն ա՛հնուրեք:

Տեսնելով այս խառնակութիւնները որոնցմով ժամանակը կը նկրտի խորխորատ մը բանալ մեր առջև, կ'որհնեմք այն հարուածները որք կը գործածուին ի բարձումս առէն անկարգութեանց անշուշտ ապականութեան հողմը ընդ երկար չափ-

տի շնչէ տղէտ և անասնամիտ արանց միջալայ-  
րերը, և լուսաւորութիւնը դատափետուած ժա-  
մանակ մը՝ այլ հուսկ ուրեմն իւր գլուխը վեր  
պիտի բարձրացնէ, և իւր իրաւունքները պիտի  
կտակէ օգտախնդիր ազանց:

Հայ վիպասաններու համար անսպառ նիւ-  
թեր կան ընտանեկան յարկերուն տակ. իրաւ է  
որ բաղմախուով Բարիզն կամ ուրիշ եւրոպական  
քաղաքներ շատ նիւթեր կը մատակարարեն օ-  
տարազգի վիպասանաց, որպէս Վ. Հիւկօներու,  
Ա. Տիւմաներու, Է. Սիւերու, և բազմաց. սա-  
կայն երբ միանգամ վեր առնունք այն վարա-  
գոյր որ կը ծածկէ մեր մէջ գաղանխքներ, նը-  
շաւակելու արժանի մոլութիւններ, զգուշանա-  
լու պատշաճ մոլորութիւններ, այն ժամանակ  
հայ վիպասէրներու լաւ և հրահանգիչ ճարակ  
մը կը պատրաստուին, բաւ է միայն որ ընթեր-  
ցասիրութիւնը քաջալերէ ըստ կարի հանճարեղ  
գրագէտը, և գրական արուեստը լաւագոյն  
ասպարէզ մը դառնայ ի մեզ:

Այդ գրականութիւնը միայն կը մնայ ինձ  
խօսակցելու անոր հետ՝ որ իւր երկրաւոր պան-  
դխտութեան մէջ ի հեռուստ ականատես եղած  
էր մարդկային վշտաց. այն անցաւոր պանդխ-  
տութեան մէջ վաղամեռ կոյսն ի՞նչպէս չմը-  
տածեր թէ երբ գարնանային եղանակներ ամ  
ըստ աւէ կուգան բնութիւնը պճնազարդել, իւր  
և իւրայոյն համար չեն այն ծաղիկները սփռը-  
ւած դաշտ ու ձոր, ի՞նչպէս մտածեր թէ բա-

բաւթեանց տէրն Աստուած առէն ընտկան պարգեւներ առաթուր ընէ պահ մը դարձեալ իրեն համար . ի՞նչպէս խորհէր թէ ծաղիկն ու բոյս ի մօտոյ դարդ պիտի լինին իւր գերեզմանական հողակուտին վրայ: Իրեն համար յաշխարհի չպիտի երգեն թռչունք զսէր, չպիտի խառնէ արեգակն իւր ճաճանչներ նորա աչաց շողբուն հետ, չպիտի ցօղեն լուսին և աստղունք նորա դեղձան հերաց վրայ:

— Ո՞ւր ես, քոյր իմ. կը հարցնեմ այլ ես անժոյժ:

— Աղօթագրքէս գոց ըրած աղօթքներս յունկն Անմահին յեղյեղելու գացած եմ, մի վախնաք, ես ձերն եմ, պիտի դամ ընդհուպ և դարձեալ առէն երեկոյ Ձեր ընթրեաց սեղանը պիտի պատրաստեմ, որոյ շուրջը շարուած երբեմն անվերջ խնդու թեամբ ընտանեկան սիրոյ ճաշակն կառնուինք:

— Մի սրտնեղիր, երբ ըսեմ, մէկդի թող այդ աղօթագիրքն, քու մինակ միմունջդ սրբանուէր աղօթք մ'է, և ակնարկդ՝ թէ և քաղցրահայեաց՝ սարսափահար կը հալածէ չարագործն՝ որ կերթայ մութի մէջ իւր վրէժխնդրութեանց վրայ խորհիլ, այլ քու տեսքդ կերեւի քաղցրածաւալ լուսով մը մթասոյզ այն չարագործին, և զանի սառ կը դարձնէ:

Այսու ամփոփուեցայ տակաւ, բայց երբ Մ. Պէշիկթաշեանի ՎԵՐԱԴՄՈՋ անուն սրտառուչ տաղերգութեան հետեւեալ մտան կարգացի,

տիրական բնագրով մի լեցուեցայ :

«Այսպէս ահա ծաղիկ և ցօղ  
Սոխակն անոյշ, անոյշ առուակ  
Եւ արսիւնոյն կենսաբեր շող,  
Մեկնին սակայն, դառնան երագ.  
Եւ դու, կուսիկ, դու որ դեռ նոր  
Ծածկեալ ի հող մատաղ ըզտիս  
Տարեր ըզգեղգ, ըզբոյր և շնորհ,  
Ահ, դու միայն ոչ եւս դարձցիս » :



Ազիտորմ բաժանումն . բաժանումն միշտ  
տիրապետեցիկ է . թէ նոյն իսկ հարսանեաց մը  
համար մեր սիրելին բաժնուի մենէ , անձկու-  
թեամբ կը հարցնենք նմա , ե՞րբ պիտի վերա-  
դառնաս . սէրը իւր մէջ դիւթութիւններ ունի .  
եւ եթէ շատ անգամ արցունք և հեծեծանք  
կը պահանջէ պատճառն այն է որ կողբայ թէ  
է՞ր աշխարհի վրայ չեն իրականանար սիրոյ ցը-  
նորքները : կը տեսնես զինուորը՝ որ ծիծաղկոտ  
դիմօք կը խառնուի իւր ընկերաց դասուն , յան-  
կարծ կը յիշէ , դա՛ռն յիշատակ , իւր սիրելիքը  
զորս ի մտոյ պիտի թողու . հոս երկու սէր ի-  
րարու հետ կընդդիմամարտին , հայրենեաց սէր  
և ընտանեաց սէր . երկու զօրութիւնք իրարու  
դէմ ճակատած են , և մինչ եռանդուն զինուո-  
րը ուրախարար բաժակը ի ձեռին ունի , ահա  
արտասուաց կաթիլներ անոր մէջ կը կայրակեն .

բունազրօսիկ ժպիտներ կը փոխանակէ իւր ընկերաց հետ, և կը վազէ ի տուն հայրենի, կը կոխէ յուզեալ ոգւով՝ տանը սեմը և կը ձայնէ իւր սիրելիքը, ինչ տրամախառն խնդութիւն :

Չա՛րկ, խորտակէ՛ սուրդ, ո՛ր զօրական, որպէս խորտակեցաւ սիրտդ. ընտանեկան յարկին առջեւ թող վշրի սուրն այսինքն վայրագութիւնը զգօնանայ հոն. սակայն ոչ. ժամանակին օրէնքը կը հրամայէ. հլու սիրտը պէտք է հնազանդի. արտասուող աչքը պիտի փաշի : Հայր և մայր դրան առջեւ են. հեռուէն փողերն կը հնչեն, ասեղալուր մահուան զանգակներու նման. հայրն ու մայր իրենց արցունքը կը նուիրեն, քոյրն իւր սակի մագերէն ծոփ մը կը կտրէ և իւր եղբօրը կուտայ. իսկ եղբայրը, այն քաջ զինուորը համբոյրներ կը դրոշմէ կուշտ կուշտ. և կը խոտտանայ ի դարձին տալ անոնց թանկագին նուէրներ :

Անտարակոյսէն չպիտի կրնամ՝ այս տողերուն մէջ ուրուսողրել այն տարանջատ եղբարց կացութիւնը՝ որ հայ տարեգրութեանց մէջ վշտալից պիտի նկարուի, այն հայ եղբարց տառապանքները : Այս ծառայութիւն կը թողում հայրենախօս եռանդուն գրագիտաց՝ Ալիշանի, Հայրիկի, Սրուանձտեանցի, Ս. Տէր Սարգսեանցի և այլոց. որպէս զի նկարագրեն հայութեան՝ պանդխտութեան չարիներն : Պան-

գիտական կեանքի տեսարերն են Շահէն ի Սիպիր, Պանդուխտ վանցիւն, Մանանայ, Համով Հոտով, Թորոս աղբար, արցունքով գրուած գրութիւնք:



«Մնայք բարեաւի» տխրանուագ քնարը ևս հնչեց մեր եղբորն, պանդխտութեան սեւ բաժակէն ըմպելու հրամանը որոտաց ճակատագիրն, 1884 Յունիս 8ի գիշերն տխրութեան գիշեր մ'էր մեզ համար, սգոյ և արտասուաց գիշեր մը, վասն զի հետեւեալ օրը Ռուսմէլիս Անգղիական Բարաեանի ընկերութեան շոգ ենաւն պիտի բաժնէր զմեզ՝ մեր Յսիրելի եղբորմէն, յունիս 9ի շաբաթ օրն ի ժամ 10 1/2 շոգ ենաւին վերնայարկըն կը շրջէինք տխրագին զգացմամբք, մտածելով թէ քանի՜ աղիտարեր է բաժանումը, կը մտածէի ինչպէս եւրոպական քաղաքներ ամեն տարի հազարաւոր անձեր կը խրկեն օտարութեան մէջ, հեռու աշխարհներ, Սմերիկա: Նիւ քեասըլի ածխահանքներուն մէջ աշխատող թշուառ գործաւորը երջանիկ է, երբ օրուան դառնագոյն աշխատութիւններէն վերջ կը գրկէ իւր որդիքը: Իսկ պանդուխտը, զրկուած է ամեն բանէ. տխուր մտածութեամբք կը տանջուի: Փորձած եմ ընտանեկան մխիթարութիւնները գրուատել երբեմն հետեւեալ բառերով. (տես ընտանիք Հանդէս, Ա. տարի, 1 յունիս 1884):

« . . . Քաղցր է տունն և քաղցրագոյն՝  
իւր մխիթարութիւնքն , ինչպէս բոյնն ծիծեռնակին ,  
և ինչպէս փարախն խաշին , արդեօք  
պիտի հասնի այն օրը , երբ փարին սիրելիք բզ-  
միւեամբք յետ բազմամեայ հեռաւորութեան ,  
երբ իրենց շունչն խառնուի միւեանց , և սիրա-  
հեշտ տեսութիւններ ծծեն միմեանց գիրկը ,  
այն ժամանակ երբ այլ ևս ծերացած են ծը-  
նողք , և մէկ երկու անդամներ այն գողգոր օթե-  
ւանին հրաժարած են ի կենաց , և յախտենու-  
կանութեան խորն թեւարկած են . երբ այդ-  
ընտանեկան երգիքին տակ գումարին կուսանք  
և երխտասարդք ցնծութեան տօն կատարելու  
և ուրախարար բաժակն քա՛նելու՝ բախտին գառ-  
նութեանց իրբեւ արհամարհանք մը . ա՛հ , հոն  
որ և է ձայնի աշխարհի շրնգ-վիջեր երգոց շը-  
ռինգն և յոյզն կենաց :

« Այդ յաղթահասակ տունն , վկայ մերթ-  
ուրախութեանց և մերթ վշտաց , կընդունի իւր  
ծոյցն այն գեղայոցս գարմանին հեռաւոր՝ որոյ  
ծնունդն տեսած է , և նորա մօրն երկանց ճը-  
չերուն ականջալուր կանգնած է , և մայրու-  
թեան տառապանաց վրայ խորոված է և ինք  
իրբեւ երկրորդ մայր մը . այժմ՝ ծիծաղկոտ ջահե-  
րով կը լուսազարդի և գեղեցկագոյն հանգէս մը  
կը կատարէ գեղանիներու և գեղուհիներու հա-  
մախմբութեամբ , հաւատարիմ հեռեւող կե-  
րելի բոլորեցունց զգացմանց , և երկնաալաց  
ուխտեր ունի զորս յերկինս կը բարձրացնէ » . . .



Այն, եղբայրս հեռի է մենէ, սակայն նա առանձին չէ. ունի նա իւր շուրջը եղբայրներ, որոց է միայն Պ. Լեւոն Սեմէրճեան անձամբ ճանչնալու բարեբախտութիւնն ունիմ, և որում յանհունս երախտապարտ եմ, զի մատոյց ինձ թանկագին ծառայութիւն մը՝ կատարելով իմ մէկ յանձնարարութիւնս: Մանչեաթրի պատուական հայ դպրոցի թանկանոթիւնը կը շնորհաւորեմ, որ իւր մէջ օգտակար անդամներ ունի. որ Բրիտանական սիւննքէն ձայն կը բարձրացնէ յանուն հայ ժողովրդեան շահերուն, եւ իւր քուէն կը նետէ բարութեան, ազնուութեան, մարդասիրութեա: Գանձանակին մէջ, նա միայն այս առաքինութիւններով չբաւակաւնանար, այլ ունի այլ բարեմասնութիւններ՝ որոնցմով օտարութեան մէջ անջինջ կը պահէ հայութիւնը:

Կը խնդակցիմ ի սրտէ Մանչեաթրի Հայոց Հոգևոր հովուին Գեր. Հ. Սուքիաս Պարոնեանի՝ որ իրեն համանման զգացմամբ օժտեալ Հայութեան մի կարեւոր մասին գլուս կը կանգնի:

Ուրեմն, քաղցր եղբայր իմ, անսխիթար չպիտի մնաս դու, երբ աչքերդ պանդխտատեղոյդ հորիզոնին դարձնես, պիտի տեսնես անհունութիւնը՝ ուր կը մեկնին սիրելիքդ երանութեան համար. երբ քննես սիրտդ, պիտի գտնես հոն Աստուած մը նստած՝ որ կը կառավարէ կրքերն և անոնց ուղղութիւն կուտայ. երբ շուրջդ նայիս, պիտի գտնես բարեկամներ,

ոյց անհնար է չափուիել խոցեալ սիրտդ և շհան-  
դարտել զքեզ, երբ թղթակցիս ծնողացդ հետ,  
նոքա քու խօսքերովդ լուսաւորուած՝ պիտի  
գրեն այնպիսի նամակներ՝ որոնցմէ չյուզուիլը  
անտարբերին անկ է : Պանդխտութիւնը դժըն-  
գակ է, ըսի պահ մը առաջ, սակայն ոչ քեզ  
համար . վասն զի որչափ թեթեւ և հեշտ կը  
լինին այն աշխատութիւնք՝ որոց վարձքն է սէր .  
դու քու ծնողքդ երջանկացնելու համար, այ-  
սինքն զանոնք սիրելուդ համար տարագրուե-  
ցար, մանաւանդ սիրելիք ո՛րչափ հեռի ըլլան  
ի միմեանց, միշտ մօտ են իրենց գորովանօք :

Վսեմագոյն այս սիրոյն սեղաններն են մեր  
սրտերն, Աստուած վառած է անոնց մէջ ճրագ-  
ներ՝ որ կը լուսաւորեն բազում մահացելոց հո-  
գիք, և կարծարծեն սիւտիանք : Սոկրատ հրէ  
աշխարհի փլատակաց խորերէն, և Յիսուս ~~հր-~~  
բխտոս նոր աշխարհի վերածնութեանց մէջէն  
պատգամներ կարձակեն, վարդապետութիւններ  
որք կը մխիթարեն յուսահատ մահկանացուն և  
վեր կը հանեն նորա ոգին աշխարհի երկրա-  
բարշ վարդապետութիւններէն :



Պահ մը երեւակայենք Սոկրատ իւր բան-  
դին մէջ իւր աշակերտաց հետ այն ամսօրեայ  
ժամանակափոյցին մէջ՝ յորում սիրելագոյն ի-  
մաստասիրին խօսքերը, աշակերտաց արցունք-

ներքը, կնոջն, թշուա՞ն կնոջն ազեխորով հեկե-  
կանքները կը դղրդէին այն ախուր օթեւանը՝  
ուրկէ ներս արեւն հազիւ իւր ճառագայթները  
կը նշողէր: Շրջապատուած այն աշակերտներով՝  
որք հնոյն Յունաստանի համար ճշմարիտ փիլի-  
սոփայութեան հետեւողներն են, և որք կախ  
են դըրթանց Սոկրատայ . աւաղ, որ Քսենոփոն  
հեռի է իւր վարդապետէն, Պլատոն նոյնպէս:

Ի՞նչ կխօսի Սոկրատ այն խորհրդաւոր աւուրց  
մէջ, պատրաստել իրեններուն սրտերը այն  
յուզմանց՝ որոյ առիթ կուտայ անագորոյն մահը,  
խօսիլ նոցա՝ հագւոյ անմահութիւնն, յայտնել  
նոցա՝ յախտե՞նական աշխարհներու մեծվա-  
յելու թիւնը, և սիրոյ անհուն զեղումներն լը-  
նուլ վշտաբեկ սրտերու մէջ, և խրախուսել  
զանոնք ի հաւատս, ի յոյս, ի սէր . այն տգի-  
տութեան, իմաստալիութեան դարերու ւէջ՝  
յորս մեռելոյն ածիւնը անվերջանալի ողբերու  
կը մասնէր սիրելիքը, Սոկրատ կը կանգնէր ըս-  
տոյդ իմաստասիրութեան արձան մի, տաճար  
մի կը բարձրացնէր անժանօթ Աստուծոյն՝ որոյ  
նահատակն ինք կը լինէր: Ի՞նչ քան զայս յազ-  
թանակ պիտի կրնար Սոկրատայ անունը հնու-  
թեան փողիներուն մէջէն հասցնել իբրեւ աշխար-  
հահուչակ իմաստասէր մը . նորա խօսքերն՝ զորս  
աւանդեցին մեզ Պլատոն և Քսենոփոն խրախոյս  
կուտան մեզ գիմազբաւել մահու տաղնապնե-  
րուն և ժպտիլ գերեզմանի եզերքէն յախտե-

նականութեան անանց երանութեանց, հեզներէ աշխարհի փառքն և սպասել միշտ երկնահարուէր ձանին :

Այս էր Սոկրատայ վարդապետութեան ոգին, նա մի աստուածեան էր, հեթմանաական ժամանակներու մէջ կը ճանչնար ճշմարտն և դեղեցիկն : Ինչ քաղցր է զոհուիլ ճշմարտին և դեղեցիկին համար . Սոկրատ վայելեց այն քաղցրութիւնն, Սոկրատ մեծ մարդ մը եղաւ :

Իսկ Քրիստոս . ի՞նչ կրեց իւր վերջին պահուն, այն երկնասպարգեւ շնորհաց պարգևով և այն ուրախութեամբ՝ որք դերասցայն Էակի մը փառքն են, գոչեց . յազթեցի աշխարհի (Սուրբ Երան . Ս . Յովհ . ԺԶ . 33) : Քրիստոս տանաց պահուն ներել և սիրել կուսուցանէր, և տուցանէր թէ փահը չարիք մը չէ, ինք կը մեկնէր յատեաց երիտասարդական ա՛ննէն նախանձեղի հասակին մէջ, երեսնա՛եայ դեռ, իւր աշակերտներէն սիրեցեալ, իւր ողիէն փառաւորեալ, խաւարի և տգիտութեան դարերու մէջ, երբ դիցապաշտութիւնը բազմններ կը կանգնէր ամպարիշա կուսքերու ի պատիւ, երբ վրէժխնդիր աստուածութիւններ պատերազմի թատր մը կը յօրինէին զաշխարհ . այն ստուն Քրիստոս ձայն կը բարձրայնէր և բազնաց անկումը կը վճռէր, և նոր արշալոյս մը կուսուէր աշխարհի ստոյգ վարդապետութեանց մարդկութեան սրտին տիրելը, ահա այն ժամանակէն կըսկսէր նոր թուական մը քաղաքակր-

Թու թեան տարեգրութեանց մէջ, սիրելի ուրեմն ինչո՞ւ վրէժխնդիր լինինք մահուան, պէտք է համարել այն ձեռքն՝ որ ի յախտենից նախատահմանեալ է հարկանել զ՛եզ, երբ կզգանք թէ մահու հարուածը սրչափ բուռն և անողոք սակայն պիտի բերէ երանութիւններ, ո՞չ սպաքէն սեռ գիշերէն վերջ լոյս մըրկէն վերջ հանգարտութիւն, և ձմեռնային խտտութիւններէ յետոյ զարնանային անուշակ հաճոյքներն կը, աջորդեն. երբ կը հաւատանք թէ ատուածալին սէրը չթաղուր զ՛եզ մեր ա՛նհէն զաւագին ժա երուն մէջ, այն սէրը որ անհա՛եմտս վեր է բարբ երկրային սիրելութիւններէն, կառաջնորդէ զ՛եզ որպէս սիւն սանդոյ, սիւն լուսոյ կը վարէր խարայելի սրբը :

Այդ սէրն է դարձեալ որ կանխատեսելով անուապանքները աշխարհի, պատրաստեց մեզ, սգուոյն ի տէր ննջեցելոց անպատում ուրախութիւններ, այն երկնային վճռէն վերջ երբ Քրովրէին փայլակնաշող սուսերը կարգելէր զգրական մեր նախածնողքէն, անգլի և այսր զաւք և աղէտք տիրեցին աշխարհի, այս սրտասուայ հովտին :

Ուրեմն ի՞նչ կը մնայ մեզ որ ատցիկեաններ չենք, հաւատքը կուսուցանէ մեզ երկնից հրապարները, սրոյ արժանանալու համար աշխարհի վրայ առաքինութեանց նախակրթանքն պիտի ընեմք : Սոկրատ չտեսց մեզ,

այն ճշմարտութեան պաշտպանը, և եթէ պահ մը կարծենք թէ նա դրժեց իւր սիրգրունքներն և ստեց. ի նշպէս կարելի է որ Քրիստոս իւր Աւետարանը հին աշխարհի վառած խարոյկներուն լէջ նետէ և ուրանայ իւր վարդապետութիւնը:

Հոգւոյ անմահութեան կը հաւատանք, և կը հետեւինք այն վարդապետութեան որ մեզ կուսուցանէ սիրել և ներել:

Սոկրատայ և նոյն իսկ Քրիստոսի վարդապետութիւնները իշելէ վերջ հարկ չմնար այլ ևս հին և նոր խնատասիրաց խօսքերն ի վիրայութիւն ամել, ուրեմն Ղամարդինի հետ կրկնենք:

Ողջո՞նք ընդ քեզ, սլ մահ, վրկիչ երկնատար,  
Չերեւիս գու ինձ ի տեսիլ դըժընդակ:

սու թողունք գիտնոց որ վիճարանին հոգւոյ անմահութեան գոյութեան կամ՝ չգոյութեան մասին. խղճի ձայնը Աստուծոյ մը ձայնն է, ըսենք այն ձայնին, մերժենք նոյն իսկ Պիւթագորի քնծայուած հոգեփոխութեան գըրութիւնն, որ քրիստոնէութեան ոգւոյն հակառակ է. չչաւինք հայկական այն նախկին պարզմտութեան վրայ որով Արայի գիակը վերկենցաղելուն կը հաւատային մեր նախնիք, և ըսենք թէ անմեղասուն օրիորդ մը սցս պահուս մեզ կուսուցանէ հասարակ, և կը դոչէ մեզ «կենդանի եմ»՝ արիացած ինք այն հաւատքով:



Քոյր իմ՝ վաղահետ, Վիսթարեցիք զմեզ  
ի մահտանդ որպէս կուրախայնէիր ի կենցա-  
ղումդ զեզ: Այն երջանկութիւն որ անապատ  
հողիներու վարձքն է, կը վայելես դու այժմ.  
Ե քու վաղահաս կորուստդ նման է Աղալայի կու-  
րատեան որ իւր կուսական ամբժուութիւնը չկո-  
րուսելու համար զբաւեցաւ վաղ ի կենաց, թե-  
րեւս դու ալ ի ծածուկ Աղալայի այն ա՛րեւիկացի  
օրիորդին ուխտն ըրած էիր, մինչ մայրդ հակա-  
ռակ էր այնմ, մինչ հակառակ էին սիրելիքդ.  
Թերեւս եզրօրդ Միհրանայ ըսածն է հաւանա-  
կանն թէ «Ար սիրելի քոյրն երկնային երանու-  
թեան արժանայնելու համար այսպէս իւր ան-  
մեղ ժամանակն յարմար դատած են երկինք,  
զի աշխարհի 20—30 են տարիները յաւիտենա-  
կանութեան անվերջանալի դարերուն հետ բազ-  
մառոտով մէկ վայրկեան մ՛խակ չեն, այդ մի քա-  
նի աւելի տարիները գուցէ պատճառ ըլլային  
իւր հողւոյն կորստեան և Աստուած առ այդ  
ուղեց իւր քով կանչել մեր քոյրը »:

Սակայն մինչ դու գնացիր եթեր, միայնակ  
չես թողուր զմեզ և կուգաս մեր երազոց մէջ  
սպիտակագգետ և դեղածիծաղ՝ քու Հնորհա-  
կալութիւնդ, այտնել այն բազմաթիւ անձանց  
որք քու հարստանեկան թափօրիդ վրայ իրենց

ներկայում թեամբ շուք աւերայցին, այն առաքինեաց ստրտօխին՝ որոց որոնց յազումը հաւատար էր ծնողացդ և եղբայրցդ յազմանց, քու մեծարանքդ մասուցանել այն պերճախօս եկեղեցականին՝ որ քու առաքինութիւններդ դըրուասեց ոչ իբրև Վարձկան մը, զմայրումդ արտայայտել այն զպրոցականաց՝ որք առանձին չթագին դքեզ և դքեզ շրջապատեցին, և դերեզմանի խաւարն հալածեցին իբրնց խօսքերումն :

Աւրեմն դու առ մեզ ես երազոց մէջ խօսակից ընդ մեզ, և ուրախակից և իրախօսսիչ օրպէս երբեմն . այսուհետեւ միշտ պիտի երազենք օրպէս դի վայելենք քոյդ ներկայութիւնը . երազենք գիշերուան մէջ, օրպէս ջնն երազեր աշխարհասէրք յարթնութեան :

Մնտաի բերկրանք պիտի ըսեն ինձ դուցէ . սակայն վաղանցիկ բերկրութենէն աւելի զոր երազն կը ծնուցանէ, հաւատքն կը բաշխէ առատօրէն լիութիւններ . ուրեմն հաւատանք և յուանք յաւիտենական երանութեանց :

Ահա այս երանութեանց յիշատակը կը մնայ մեզ սիրովական, և ծաղիկներ կը սիրէ այն կենաց ճանապարհին վրայ, յոյս կը ներշնչէ այն վաղամեա կուսին ընկերութեաց, սիրովումն կը ապաւորէ Օրիորդ Ե. Գաղղպեանի և նորա ազնիւ քրոջ, որոց հետ հաճոյք



կղզար քոյրս տեսակցիլ միշտ, և Յր. Ֆ. Գա-  
զազեանի՝ սոյն հետ ի հետոսս կը հաղորդակ-  
ցէր, այլ միշտ սիրով և սրտով մօտ էր նմա:

Այսուհետեւ միշտ պիտի թղթակցինք,  
քոյր իմ, քեզ հետ և դու պիտի պատմես  
անշուշտ երկնադաւառներու հեշտութիւնները,  
և հրեշտակաց վայելքներն զորս արդ կը վա-  
յելես, և քեզմով խրատուստած պիտի ըսեմ՝  
Որդեգորով ծնողք իմ, երանի Ձեզ՝ որ հրեշ-  
տակի մը ծնող եղաք, իա՛նք Ձեզ, որ զանի  
Աստուծոյ մը որդեգիրն ընել նախադասեցիք՝

Մերեւոյցոյն եղբարք, երջանիկ էք, զի  
խնկենեաց մէջ հանգուցիք Ձեր քոյրը:

Իսկ ինձ թող ներուի նորա հաղակուտին  
փայ սա՛հ մը ծուներ դնել յուսովս աչքերս  
արձակելով դէպ ի հորիզոն՝ ուրիշ արդարն կը  
մեկնի երանաւէտ փոյր մը, հոն ուր կենաց ա-  
հն յեղաշրջութիւններ կանգ հասնուն, հոն կը  
չազրի նոյնպէս Գալիլէոսի աշխարհը. հոն  
կուրս արծուոյ թեւերով կը վերասլանայ, և կը  
սփռի սի:



Գոցեցինք դամբանը, այլ չգոցեցինք մեր  
սրտերը, ուր անմահ յիշատակը կը կանգնէ  
արձան սիրոյ, առաքինութեան մշտայուշ կո-

Թողն , օրհնենք զանի որ կը վերկենցայէ մեր սիրելիներն . չէ անագորոյն անցեալին նման որ իւր անգնդոց մէջ կուզէ իսպառ խորագուզեր ամէն մեծութիւնք աշխարհի , մանաւանդ հւլատքն , այն միտիթարիչ գերմարդկային զօրութիւնն մէկ ձեռքով մեր արցունքները կը սրբէ , միւսովն կը բանայ երանելեաց համար վարագոյրն նոր աշխարհներու՝ որք լուսւորում են բազմաթիւ գեղարլոյս արեգակներով .













